ՀՀ ներքին գործերի նախարարության

ֆինանսաբյուջետային վարչության պետ

Վարդան Պետրոսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ

Համիկ Հրաչիկի Օհանյանի կողմից 2024 թվականի 4-րդ եռամսյակում

կատարած աշխատանքների վերաբերյալ

2024թ. 4-րդ եռամսյակի ընթացքում իմ կողմից ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մ. Հարությունյան 1ա աշխատավայրում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Ընդունել եմ Սյունիքի մարզային վարչության աշխատողների հոկտեմբեր ամսվա աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիրը, նոր ստեղծված քրեական ոստիկանության գլխավոր վարչության Սյունիքի մարզային վարչության ծառայողների հրամանները, դրամական վարձատրության վերաբերյալ վկայականները, կատարել աշխատավարձների, պարգևատրումների, գործուղումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների, ոստիկանության ծառայողների և նրանց ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու և վերադառնալու համար վճարվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցումների հաշվարկները, կազմել համապատասխան կուտակիչ տեղեկագրեր և վճարման ցուցակներ:

2. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային ֆինանսավորման հայտ-պահանջագրեր, ամփոփել ենթակա բաժիններից ընդունած հայտ-պահանջագրերը և ներկայացրել ֆինանսավորման ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

3. Ներկայացված հայտ պահանջագրերով բացված ֆինանսավորումների հիման վրա գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգի միջոցով կատարել եմ ենթակա բաժինների ֆինանսավորումները, մարզային վարչության հաշվից կատարել աշխատավարձների, գործուղումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների, սոցիալական վճարի, եկամտային հարկի և այլ վճարումները:

4. Վարել եմ աշխատակիցների աշխատավարձների հաշվարկման անձնական քարտերը, նոր ստեղծված քրեական ոստիկանության գլխավոր վարչության Սյունիքի մարզային վարչության ծառայողների համար բացել նոր քարտեր, ծառայողական տեղափոխումների և ծառայությունից արձակվելու դեպքում կազմել դրամական վարձատրության վկայականներ, կատարել վերջնահաշվարկ:

5. Կատարել եմ սոցիալական փաթեթի ուղղությամբ հատկացվող միջոցների հաշվարկումը և վճարումը:

6. Սահմանված ժամկետում կազմել և էլեկտրոնային եղանակով հարկային մարմին եմ ներկայացրել եկամտային հարկի և սոցիալական վճարի 2024թ. սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ամփոփ հաշվարկները:

7. Կատարել եմ հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գրանցման և հաշվառման աշխատանքները, դրանց ստացման համար դուրս գրել լիազորագրեր, վարել լիազորագրերի հաշվառման մատյանը:

8. Կազմել եմ 2024 թվականի 3-րդ եռամսյակի հաշվապահական հաշվեկշիռը կից հաշվետվություններով, ամփոփել ենթակա բաժինների կողմից ներկայացրածները և սահմանված ժամկետում ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

9. Մասնակցել եմ վարչության 2024թ գույքագրման աշխատանքներին, կազմել համապատասխան փաստաթղթեր և ներկայացրել ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչություն:

10. Կատարել եմ ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարարականները, շրջաբերականների պահանջները, հետևել ցուցումներին, պարզաբանումներին, նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններին:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Հասմիկ Օհանյան

« 28 » դեկտեմբեր 2024 թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ ________:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ Վարդան Պետրոսյան

«30» դեկտեմբեր 2024 թիվ